ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԱՐՏԱՀԵՐԹ՝ ՀԵՌԱԿԱ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՄԲ ԱՆՑԿԱՑՎՈՂ ՆԻՍՏԻ

ք. Երևան **05.11.2024թ.**

ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի կառավարման խորհրդի (այսուհետ՝ Խորհուրդ) նախագահի 01.11.2024 թվականի N 08-Լ որոշմամբ Խորհրդի անդամներ Ժ. Մայիլյանի, Տ. Քեյանի և Շ. Դանիելյանի անդամության ժամկետները երկարաձգելու հարցը քննարկելու նպատակով 2024 թվականի նոյեմբերի 4-ից 5-ը անցկացվել է արտահերթ նիստ՝ էլեկտրոնային քվեարկությամբ:

Քվեարկության նյութերը սահմանված ժամկետում ներկայացվել են Խորհրդի անդամների էլեկտրոնային հասցեներին:

Օրակարգ.

1. «Իրական աշխարհ, իրական մարդիկ» սոցիալական հասարակական կազմակերպության նախագահ՝ Ժ. Մայիլյանի անդամության ժամկետը երկարաձգելու որոշման կայացում:

2. «ՓՄՁ համագործակցության ասոցիացիա» հասարակական կազմակերպության աջակցության ծրագրերի ղեկավար՝ Տ. Քեյանի անդամության ժամկետը երկարաձգելու որոշման կայացում:

3. Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարանի (ԵՊԲՀ) աշխատակազմի ղեկավար՝ Շ. Դանիելյանի անդամության ժամկետը երկարաձգելու որոշման կայացում:

Քվեարկությանը մասնակցել են՝

Ա. Ավանեսյան - ՀՀ առողջապահության նախարար (Խորհրդի նախագահ)
Ռ. Սարգսյան - ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի տեղակալ
Տ. Հակոբյան - ՀՀ վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակի ղեկավարի տեղակալ
Ա. Խոջոյան - ՀՀ էկոնոմիկայի նախարարի տեղակալ
Լ. Բալյան - ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ
Վ. Սիրունյան - ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ
Ժ. Մայիլյան - «Իրական աշխարհ, իրական մարդիկ» սոցիալական հասարակական կազմակերպության նախագահ
Տ. Քեյան - «ՓՄՁ համագործակցության ասոցիացիա» հասարակական կազմակերպության աջակցության ծրագրերի ղեկավար

Շ. Դանիելյան - Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարանի (ԵՊԲՀ) աշխատակազմի ղեկավար

Հ. Էիլոզյան - Հայաստանի ամերիկյան համալսարանի Ջերալդ և Փաթրիշա առողջապահական գիտությունների ֆակուլտետի գիտաշխատող

Քվեարկությունը համարվում է կայացած:

Քվեարկության արդյունքում.

1) Ա. Ավանեսյանը օրակարգի բոլոր հարցերին քվեարկեց կողմ,
2) Ռ. Սարգսյանը օրակարգի բոլոր հարցերին քվեարկեց կողմ,
3) Տ. Հակոբյանը օրակարգի բոլոր հարցերին քվեարկեց կողմ,
4) Ա. Խոջոյանը օրակարգի բոլոր հարցերին քվեարկեց կողմ,
5) Լ. Բալյանը օրակարգի բոլոր հարցերին քվեարկեց կողմ,
6) Վ. Սիրունյանը օրակարգի բոլոր հարցերին քվեարկեց կողմ,
7) Ժ. Մայիլյանը օրակարգի 2-րդ և 3-րդ հարցերին քվեարկեց կողմ,
8) Տ. Քեյանը օրակարգի 1-ին և 3-րդ հարցերին քվեարկեց կողմ,
9) Շ. Դանիելյանը օրակարգի 1-ին և 2-րդ հարցերին քվեարկեց կողմ,
10) Հ. Էիլոզյանը օրակարգի բոլոր հարցերին քվեարկեց կողմ:

Քվեարկության արդյունքը՝ օրակարգի 1-ին հարցին **9 կողմ, 0 դեմ,** 2-րդ հարցին **9 կողմ, 0 դեմ,** 3-րդ հարցին **9 կողմ, 0 դեմ:**

Սույն արձանագրությանը ծանոթանալուց և համաձայնություն տալուց հետո Խորհուրդը որոշեց.

1. Երկարաձգել Խորհրդի անդամների՝ Ժ. Մայիլյանի, Տ. Քեյանի և Շ. Դանիելյանի անդամության ժամկետները:

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ա. ԱՎԱՆԵՍՅԱՆ

ԽՈՐՀՐԴԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Գ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ